սկսել էին հունձը, խուրձեր կապել, դեզեր կանգնեցրել, բայց այդ ամենը առասպելական զաւազանի հարւածով, միանգամայն տեղերում սառել, քարացել է. աշխատող ձեռքերը գնացել են իրանց քաղաքացիական պարտականութիւնները կատարելու, սակայն մենք պէտք է աչքաթող չանենք տառը մեացած անօգնական անդամներին օգնութեան հասցնելու գործը։

Ձնայելով որ կազմակերպւած են բազմաթիւ կոմիտեներ պահեստի զինուորների ընտանիքներին օգնութեան ձեռք կարկառելու, սակայն անքերի իրականացնելը շատ դժւար է, եթէ գիւղացու շահերով տարւած մարդիկ լայն աշակցութիւն ցոյց չտան։ Այս պարագայում մեծամեծ գործեր կը բուռ է անել գիւղի բանիմաց դասը։ Իմ նեւատ կարծիքով աւելի լաւ կը լինի այդպիսի գիւղերի ղեկրոցում պարապմունքները մի քիչ ուշ սկսեն, քան թողնեն, որ դաշտերում հնձածը փթի, և մարդիկ ենթարկւեն սովի վտանգին. պէտք է կազմակերպել հասարակական ոյժերով վերջացնելու դաշտային կիսատ մեացած աշխատանքները, իսկ այդ գործի նախաձեռնութիւնը ծանրանում է գիւղի գիտակ մարդկանց վրայ։

Ց. Դաւթեան։

ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԽՕՍԱԿԸՆ

«ՄԵՐ ԴՊՐՈՑԸ»

Բ. տարի. պատկերազարդ ընթերցարան ուղղագրական ձեռագիր օրինակներով ու իրականական պատկերներով. կազմեցին մի խումբ ուսուցիչներ։ Թիֆլիս, տպարան «Հերմէս» 1914 թ. գինն է 40 կոպէկ։

Մի խումբ ուսուցիչների ձեռքով կազմած այս դասագրքի ա. տարւայ մասին «Հարիւրամեայ» անցեալ տարւայ համարներից մէկում այն կարծիքն են յայտնել, որ նա իրաւ արժանի է այն անունով կոչւելու ու, չը նայած իր մի քանի թերութիւններին, մայրենի լեզուի ուսուցման համար գոյութիւն ունեցող մեր դասագրքերի շարքում կարող է աչքի ընկնող տեղ ունենալ՝ եթէ, ի հարկէ, իրական փոքրիկ ցուցմունքներով վերացւեն մատնանշած թերութիւնները։ Նոյնը կարելի է ասել և նորերս հրատարակւած բ. տարւայ մասին, այն առանձնութեամբ սակայն, որ այս դասագրքում թերութիւնները, որոնք անխուսափելի են առաջին հրատարակութեան մէջ՝ ինչքան էլ վարպետ լինի կազմող ձեռքը, բանականաչափ նւազ են, իսկ արժանաւորութիւնները աւելի աչքի ընկնող։ Եւ այդ շատ բնական է. ուսուցման առաջին տարւայ համար դասագիրք կազմելն աւելի դժւար է։

«Մեր դպրոցի» բ. տարին աչքի է ընկնում նիւթերի առատութեամբ, բազմատեսակութեամբ ու հակիրճութեամբ. Վերջին յատկութիւնը, որը նկատւում է և ա. տարւայ մէջ, ամենագնահատելին է. ամբողջ դասագրքում չկայ մի այնպիսի յօդւած՝ արձակ կամ ոտանաւոր, որը իր երկարաձգութեամբ ու տարտակիութեամբ կարողանար ձանձրոյթ պատճառել մանուկներին։ Նիւթը գիւրամարս է թէ լեզուի կողմից և թէ իմաստի, ներքին բովանդակութեան մեծ մասամբ մեր յայտնի հեղինակների գործերից են ծովվ. Թումանեանի և միւսների, որոնցից մի քանիսների անունները դասագրքի եռեսում տեղաւորած ցուցակում չեն մատնանշւած, բայց իրենք՝ գրւածքներն ասում են, որ հմուտ վարպետների արարդութիւններ են, մեր մանկական յայտնի հեղինակների առաւելապէս։ Դասագրքը կազմողները ոչ պակաս վարպետութեամբ դասաւորել են նիւթերը՝ ըստ նրանց մատչելիութեան տարիքի ու յետոյ՝ ըստ շրջապատի և տարւայ եղանակների։ Քանի որ մեր գրական լաւ վարպետների գործերից են դասագրքի նիւթերը, աւելորդ է ասել որ նրանք կարող են մեծապէս նպաստել մաքուր գրական լեզուի պատւաստման մեր մանուկներին, ինչ նպատակի շատ աղող կերպով հասնում են, օրինակ՝ «Լուսաբեր» դասագրքերի հեղինակները, որոնց գնահատելի գործի շարունակողներն ու ըստ արժանւոյն աշակցողներն են հանդիսանում «Մեր Դպրոցը» դասագրքերի կազմողները. «Մեր Դպրոցում» ես գրական լեզուն վարպետորէն հանմեմած է բուն ժողովրդական լեզուի ու բարբառների մարգարէներով, որոնք ոչ մի յօդւածում կամ ոտանաւորում կեղծ նոտաների տպաւորութիւն չեն թողնում։

Շատ աղող են ձեռագիր տառերով տպած օրինակները իրրև լաւ նմուշներ գեղագրութեան համար. հետեւելով այդ օրինակներին երեխաները կարող են գրել մի տողի վրայ ու ընտելանալ տառերի ամենատպած ձեւերին՝ բոլորովին զերծ խրթին մազգծերից։

Դասագրքում կան իրականական պատկերներ նաև։ «Մեր դպրոցի» թերութիւնները նրանց մէջ է նկատւում գլխաւորապէս պատկերները քանակով քիչ են, իսկ բովանդակութեամբ ոչ այնքան հարուստ և բազմատեսակ. որոշ սխտեմ էլ չի նկատւում նրանց մէջ։ Եղած պատկերներով դասատուները կարող են օգտւել զրուցաբանութեան համար, բայց գիտելիքներ մատակարարել նրանց միջոցով ու այն էլ որոշ սխտեմով ոչ։ Իրրև մի ուրիշ թերութիւն պէտք է մատնանշել այն, որ պատւաստածներից ու ոտանաւորներից մի քանիսը, ոչ մեր յայտնի հեղինակներից վերցրածը, աչքի են ընկնում իրենց արհեստական ութեամբ ու հետեւաբար նւազ գեղարւեստականութեամբ. այդպիսիներից են՝ «Մեր դպրոցը» (3-դ էջում), «Ունենի՞ կամ՝ չունենի՞» (6-դ էջում), «Նեամակ ծառերից» (21-դ էջում) ու մի քանի ուրիշներ։ Մի թերութիւն առանձնակի է աչքի ընկնում ու փչացնում տպաւորութիւնը նկատելի չափերով. դա կենդանիների արտայայտութիւններն է առանձնայատուկ գրաւածքներով պարզ ընթերցելի բառերով, որոնք պէտք է շատ հակիրճ լինէին ու անարհեստական։ Այդ անպղող գրաւածքների իրրև նմուշ մատնանշելի է հետեւեալը՝ ...«Ընդա—մըզակ մըզեր ղըզա-ըզը-ցըզին» «Նամակ ծառերից» յօդւածից։

Բոլորովին անօգուտ են այդպիսի գրաւածքները. ոչ հոգոյ ես, ոչ մարմնոյ, այսպէս ասած։

Դասագրքի տիպը մաքուր է՝ թէ տառերի թէ պատկերների։

Հայ ժողովրդական կենցաղավարական իրականութիւնից պատկերներ չկան, որոնք իրրև իրականական նիւթեր, դիտողական ուսմունքի առարկայ, շատ ցանկալի են այդպիսի դասագրքում։

109 մեծագիր էջեր ունեցող գրքի համար, շատերը պատկերազարդ, 40 կ. գինը մեծ չէ։

Տ. Ա.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Գեներալ Կլուկի բանակը Պրեսսի մօտերքը ընկել է խիստ վատ դրութեան մէջ։

— Լոնդոնի լրագիրները հաղորդում են Հիւսիսային ծովում տեղի ունեցած նոր ճակատամար-

Լոյս տեսաւ և վաճառ

ԹԻՒԲԱՆԱԿԱՆ Ի

ՆՈՐ ԳՈՂԳ

Թւաբանական կանոնցներով եւ խնդիր

Ա. ամբողջ թւեր. Բ. Տասներ

Զ Ո Ր Բ Ո Ր Դ

Կազմեց ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆՑ (ուս

էջ 160, Գ Ի Ն Ը

Գիրք՝ «Գիրք», «Գուստանեանքեր» և այլ գրա

462 мянск. Нерс. Се

Լոյս է

Գ. Վ. ՍԱՑԵԱՆ-ՆՈՎԱՑԻ և

ԿԱԶՄ

НАША А

Թուաց լեզուի պատկերազարդ դասագրքը

պահանջներին։

Վաճառւում է բոլոր գրավաճառանոցներ

468

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՑՈՎՀ. ԹՈ

ԼՈՒՍ

Հայերէն լեզուի պատկերազարդ

ԱՌԱՋԻՆ տարի 30 կոպ.

ԵՐԿՐՈՐԴ » 45 կոպ.

Մինչև ասսիս վերջը

ՀԻՆԳԵՐՈ

Դիւար ըմբռնելի բառերի բացատրութիւնն

շատրդական նիւթերով եւ հեղինակների

տեսութեան բ

ԳԻՆԸ 85 ԿՈՊԷԿ։ Դիմել բոլոր գրավաճ

գրախան

Կ. ՊՈԼՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ—ար

Նարան, ա, բ, գ և դ տարիներ։ Վ

Ուղեցոյց՝ գրել կարդալ ս

Պահեստը՝ Կ. Պոլիս, «Մարիա» գրախանու

Հրատարակութիւն «Լոյս» Ընկերութեան